ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Արտաշատ 19.10.17թ.

Ժամը 14:00

Մասնակցությամբ Արարատի մարզպետին կից երիտասարդական խորհրդի պետական և ոչ պետական սեկտորի ներկայացուցիչների

Նիստը վարում էր մարզպետի տեղակալ պ-ն Ի. Շադյանը

Խորհրդի ներկայացուցիչները խոսեցին իրենց համայնքներում առկա, երտասարդներին հուզող խնդիրների մասին, ներկայացրեցին դրանց լուծմանն ուղղված սեփական տեսակետները:

Մասնակիցների կողմից բարձրաձայնվեցին և քննարկվեցին հետևյալ խնդիրները.

1. Տափերական համայնքը ունի տրանսպորտային խնդիր, տրանսպորտի ժամերը այնպիսին են որ անհարմարություն են առաջացնում ուսանողների համար:

2. Այգեզարդ համայնքը նույնպես ունի տրանսպորտի խնդիր, որը չի աշխատում ոչ բարվոք ճանապարհային պայմանների պատճառով:

3. Շահումյան և Այգեզարդ համայնքներում կա մշակույթի տան վերանորոգման խնդիր:

4.ՈՒրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրում կա տրանսպորտային խնդիր՝ մեծամասամբ ուսանողների առավոտյան Երևան տեղափոխման հետ:

5.Արարատ գյուղում ճապոնական դրամաշնորհային ծրագրով ցանկանում են վերանորոգել մշակույթի տունը, ակնկալում են մարզպետի աջակցությունը որոշ հարցերում:

6.Շաղափ գյուղում կազմակերպվում է խոտաբույսային թեյերի արտադրություն՝ ի նպաստ գյուղի, որոշ խնդիրների լուծման համար ակնկալվում է մարզպետի աջակցությունը:

Մարզպետի տեղակալ պ-ն Շադյանը շեշտադրում էր և ընդգծում էր խնդիրների կարևորությունը: Նա խոստացավ ուսումնասիրել բարձրացված խնդիրները և տալ հնարավոր լուծում:

Մարզպետի տեղակալը եզրափակելով խոսքը՝ հորդորեց առավել ակտիվ լինել երիտասարդական ծրագրերի իրականացման հարցում:

Նիստն արձանագրեց Ռ. Մուրադյանը